ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼՂՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի ապրիլ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2016 թվականի առաջին չորս ամիսների ընթացքում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 8499.2 մլն դրամ՝ պլանավորված 8204.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 3.6 %-ով կամ 295.2 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 2.2 %-ով կամ ավել 183.6 մլն դրամով:

Ապրիլ ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2552.2 մլն դրամ՝ պլանավորված 2504.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.9 %-ով կամ ավել 48.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 34 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 7 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է շուրջ 12.0 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են 33 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 16-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 8-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 5-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման և 4 այլ ուսումնասիրություններ:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ներկայացված վարչական գործերից հաշվետու ամսում ավարտվել է 11 գործ, որով բավարարված գումարը կազմել է 12.1 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 16 վարչական գործով սահմանվել է 235.0 հազ. դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 1.2 մլն դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 8148 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5656:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել է թվով 83 պայմանագիր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 92 վարձու աշխատողի՝ 15.9 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 20 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային ծառայության էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացման 2016-2018 թվականների հայեցակարգը», փոփոխություններ կատարվել «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, սահմանային չափի ցուցանիշների մասին հայտարարության, համամասնությունների մասին տեղեկանքի» ձևերում և և դրանց լրացման կարգերում:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 272, ելքագրվել՝ 116 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: